

S. Ulf78

Fayful 78
Ulf 78 78

825

4-84

ՋՈՆԱԹԱՆ ՍՎԻՏՏ

ԳՈՒԼԻՎԵՐԸ
ԼԻԼԻՊՈՒՏՆԵՐԻ ՍՈՏ



825
U-84

ՊԵՏՅՐԱՏ

1934

ՅԵՐԵՎԱՆ



820
4-84

- 6 NOV 2011

ԳՈՒԼԻՎԵՐԸ ԼԻԼԻՊՈՒՏՆԵՐԻ ՄՈՏ

Զ. ՍՎԻՃՏԻ ՍՅՈՒԺԵՑՈՎ,

Վերապատմեցին

Տ. ԳՍԲԱՆՆ ՅԵՎ, Զ. ԶԱԿՈՒՆԱՅԱԿԻՆ

ՆԿԱՐՆԵՐԸ Ժ. ԳՐԱՆՎԻԼԻ

Ռուսերենից լիթվացերեն

2. ՀԱՅԴԱՊԵՏՈՒՄ

31626

CN 35799
15-3-257
11

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ՏԵՐԵՎԱՆ
1 9 3 4

05 AUG 2013

1031

Պատ. խմբագիր՝ Ա. ՀԱՅՐՅԱՆ
Տեխ. խմբ. Տ. ԽԱՉԱՏՅԱՆ
Սրբագրիչ՝ ԳԱՐ. ՀԱՅՈՐՅԱՆ



1534-81

Փլավիտ № 8653 (բ), հրատ № 3086, պատվիր № 1206, տիրած 10.000: Հանձնված և արտա-
դրության 31 հուլիսի 1934 թ., ստորագրված և տպագրության համար 17 օգոստոսի 1934 թ.

Պետհրատի տպարան, Յերեան



ԲԺԻՇԿ ԳՈՒԼԻՎԵՐԸ

«Անտիլոպա» նավը Հարավային ովկիանոսն եր ուղե-
վորվում:

Նավի յետևի մասում կանգնած եր բժիշկ Գուլիվերը
և հեռագիտակով նայում եր:

Հեռվից յերևում եր կանաչ ափը, իսկ բարձր փարոսն
արեգակի շողերի տակ փայլվում եր:

Ճայերը պտտվում եյին նավի շուրջը և թռչելիս
բռնում փոքրիկ սպասավորի նետած հացի կտորները:

Առջևում ընկած եր լայնարձակ ծովը:

Գուլիվերը բախտավոր եր:

Մանկուլթյունից նա իրեն խոսք եր տվել ոտար յեր-
կրներ տեսներ:

Նա ամենից շատ սիրում եր ծեր նավաստիների պատ-
մածները և ճանապարհորդության մասին գրած գրքերը:

Դպրոցում, ազատ ժամերին նա ղիտում եր ծովային
կապույտ քարտեզները, սովորում ոտար լեզուներ և ծո-
վադնացություն:


Ծնողները ցանկանում եյին, վոր իրենց վորդին
բժիշկ դառնա:

Գուլիվերը համաձայնեց:

«Յես նավային բժիշկ կդառնամ,—մտածում էր նա, —
ամբողջ աշխարհը ման կգամ»:

Նրա ցանկությունը կատարվեց:

Գուլիվերը նավի վրա յեր:



ՆԱՎԻ ԽՈՐՏԱԿՈՒՄԸ

արավային ովկիանոսում «Անտիլո-
պան» շատ շաբաթներ ու ամիսներ
լողաց:

Կղզիների վրա աճում էին չտեսն-
ված ծառեր ու խոտեր, մարդիկ խո-
սում էին անհասկանալի լեզուներով,
կառուցում զարմանալի տներ, տարո-

րինակ գազաններ վորսում:

Վերջապես «Անտիլոպան» վերադարձի ճանապարհը
բռնեց, բայց Գուլիվերը շուտ չհասավ իր հայրենիքը:

Մի գիշեր Գուլիվերը սարսափելի տատանում էր զարթ-
նեց: Նա դժվարությամբ կարողացավ տախտակամածի
վրա բարձրանալ: Քիչ էր մնում քամին ցած գլորեր
ներան: Նավն այս ու այն կողմն էր թեքվում: Գուլիվերի
մոտից վազում էին վախեցած նավաստիները: Փոթորիկը
բշտում էր նավը դեպի դուրս ցցված ծովափայտերը: Փըր-
կություն չկար:

Քամին ջարդեց կայմերը, ալիքները նավի դեկը տա-
րան:

Վերջապես մի ուժեղ հարված նավը մի կողմ շարժեց:

«Անտիլոպան» ուժգին զարնվեց ժայռերին:

Նավաստիները ցած թողին նավակը, բայց ալիքները
շուտ տվին:

Գուլիվերը շատ լավ լողալ գիտեր: Նա յերկար ժա-
մանակ լողում էր, ինքն էլ չիմանալով թե ուր:

Աղի ջրի կաթիլները կուրացնում էին նրան: Նա
չնշասպառ էր լինում: Խրջված բաճկոնը և ուռած կո-
շիկները դեպի ծովի հատակն էին քաշում: Ձեռքերը
սառել էին:

Գուլիվերը խեղդվում էր:


«Ոգնեցե՛ք, ոգնեցե՛ք»... աղաղակում էր նա: Սակայն

շուրջը դատարկ էր և մութ: Ովկիանոսի խլացուցիչ աղ-
մուկը նրա ձայնն անլսելի յեր դարձնում:

Յեվ հանկարծ մի հսկա ալիք Գուլիվերին ցամաք
շարժեց:



Ափը ծածկված էր փափուկ խոտով:
Գուլիվերն ափից քիչ հեռացավ, խոտի վրա պառկեց
ու քնեց:



ԼԻԼԷՊՈՒՏՆԵՐԻ ՅԵՐԿՐՈՒՄ

լեզակի այրող ճառագայթներն
ընկել էին ուղիղ Գուլիվերի աչ-
քերին:

Գուլիվերը զարթնեց:

Նա ուզեց ձեռքերը բարձրաց-
նել և աչքերը տրորել, բայց ձեռ-
քերը չբարձրացան: Ուզեց բարձ-
րանա նստի, բայց շարժվել չկա-
րողացավ:

Նա չիմացավ, թե ինչ է պա-
տահեր:

Գուլիվերը կապկպած էր սարգի վոստայնի թելերի
նման բարակ պարաններով: Նրա մազերը փաթաթված
էին գետնի մեջ խփված փոքրիկ ցցերին:

Գուլիվերն ուռկանի մեջ ընկած ձկան էր նմանում:
«Յերևի դեռ քնած եմ»,—մտածեց նա:

Բայց վոչ, յերազ չեր:

Ինչ-վոր մի բան մկան նման մազլցում էր նրա վո-
տի վրայով:

Ահա՛ վազում ե, հասնում ե ծնոտին:
Գուլիվերը նայեց:
Այս Բենչ հրաշք ե:



Նրա կրծքի վրա մի փոքրիկ մարդ եր կանգնել: Իսկական, վոտ ու ձեռ ունեցող մարդ:

Նա հագել եր զրահազգեստ, գլխին ուներ մետաղե գլխարկ, ձեռքին՝ վահան և սուր նիզակ:

Այդ մարդը հազիվ վարունգի չափ եր: Հինգ այդպիսի մարդ Գուլիվերի ափի վրա կարող եյին ազատ տեղավորվել:



Այդ փոքրիկ մարդու յետևից մագլցում եր մի ամբողջ խումբ: Մարդիկ շրջում եյին Գուլիվերի ծնկների, փորի, ուսերի վրա այնպես, վոր կարծես թե սարերի ու դաշտերի վրա շրջելիս լինեյին:

Փոքրիկ մարդկանցից մեկը մոտեցավ Գուլիվերի քթին՝ ու նիզակով փորձեց նրա քթածակը:

— Փռ՛շտ, — փռշտաց Գուլիվերը:

— Փռ՛շտ, — կրկնեց արձագանգը:

Փոքրիկ մարդիկ փախան:

Նրանք սայթաքում եյին ընկնում, թռչում գետնի վրա:

Շատերը վիրավորվեցին, իսկ մեկի վոաքը դուրս ընկավ:

Գուլիվերը փորձեց պարանոները կտրել, բայց նրանք ամուր եյին: Միայն մի ձեռքի կապերը կտրավեցին:

Այդ ժամանակ Գուլիվերի վրա հազարավոր աղեղներից նետեր թափվեցին:



Նետերն ասես իսկական քորոցներ եյին — փոքրիկ, բարակ, բայց սրածայր:

Նետերը Գուլիվերի յերեսն ու ձեռքերը ծակոտեցին: Գուլիվերը հանդարտ սպասում եր, թե վերջն ինչ պետք ե լինի:

Փոքրիկ մարդիկ նորից շրջապատեցին Գուլիվերին և նրա ախանջների տակ ամուսն ճռիկների նման ճոճում եյին:

Հանկարծ Գուլիվերն զգաց, վոր կարող ե գլուխը շարժել: գետնին ամրացրած ցցերը, վորոնց վրա փաթաթել եյին Գուլիվերի յերկար մազերը, հանել եյին:

Նա գլուխը բարձրացրեց ու տեսավ, վոր կրծքին սանդուխք են դրել:

Սանդուխքի վրայով կամաց բարձրանում եր կանաչ թիկնոց հագած, փետրավոր գլխարկ դրած մի փոքրիկ մարդ: Ճկուլթ մատի չափ հասակ ունեցող յերկու յերեխա բռնել եյին նրա թիկնոցի փեշերը:

Մարդը մոտեցավ Գուլիվերի գլխին և դանդաղ բաց արեց կանֆետի թղթի չափ փաթաթած մի թուղթ:


— Լանգրո դեգյուլ սան, — ճտճտաց նա:

Գուլիվերը վռչինչ չհասկացավ, բայց փոքրիկ մարդու լուրջ դեմքից իմացավ, վոր նա թագավորական դեսպան ե:

Գուլիվերն աչքի կոպերն իջեցրեց և գլխով հնազանդության նշան արավ:

Փոքրիկ մարդը սիրալիլ ժպտաց և թաշկինակը թափահարեց:

Ներքևի մարդիկ իրարանցման մեջ ընկան:



անդուխքով մեկ-մեկ սկսեցին բարձրանալ կռացած բեռնակիրները:

Նրանք զամբյուղներով Գուլիվերի համար ուտելիք եյին բերում:

Զամբյուղների մեջ կային սիսեռի չափ հարյուրավոր հա-

ցեր, ընկույզի չափ բուլբեր, մեր ճանճերից ել փոքրիկ հավի ճտեր:

Գուլիվերը շատ ուրախացավ:

Նա շատ քաղցած էր. ամբողջ յերկու ուր փոշինչ չէր կերել:

Ուտելիքները մեկը մյուսի յեանից կուլ տվեց:

Կերավ յերեք խաշած յեզ, ութ տապակած փոշխար, տասնինն ընտանի գոճի և հարյուր ճուռ ու սագ:

Փոքրիկ մարդիկ նայում էին ուղիղ նրա բերանին:


Զամբյուղները դատարկվեցին:

Գուլիվերը կշտացավ, բայց ծարավ էր:

Փոքրիկ մարդիկը մեծ դժվարությամբ սանդուխքի վրայով բարձրացրին յերկու տակառ գինի:

Տակառները շատ մեծ էին. ամեն մեկը մեր բաժակի չափ:

Գուլիվերը տակառների հատակը ջարդեց և գինին խմեց:




Նրա քունը տարավ:

Քնի մեջ նա լսում էր, թե ինչպես փոքրիկ մարդիկ պարում էին նրա կրծքի վրա և գոչում. «Գեկինա գեգյուր, գեկինա գեգյուր»:

Հետո ամեն ինչ հանդարտվեց:

Գուլիվերը խոր քուն մտավ:

Փոքրիկ մարդիկ գինուն քնացնող փոշի էին խառնել:



յն յերկիրը, վոր փոթորիկը գըցեց Գուլիվերին, կոչվում էր Լիլիպուտիա:

Այնտեղ լիլիպուտներ էյին ապրում:

Լիլիպուտիայում ամենամեծ ծառերը հաղարճի թփից մեծ չէին, ամենամեծ տները սեղանից փոքր էին:

Գուլիվերին քնացրել էին, վոր իրենց մայրաքաղաքը փոխադրեն:

Հինգ հարյուր ատաղձագործ և հարյուր ճարտարագետ քսաներկու անիվ ունեցող մի մեծ սայլ էին պատրաստել:

Իննը հարյուր ուժեղ մարդ հաղիվ հաղ Գուլիվերին սայլի վրա գցեցին:

Հաղար ձի սայլը քաշ տվին Լիլիպուտիայի Միլդենդո քաղաքը:



Գուլիվերը քնած էր:

Նա չտեսավ, թե ինչպես հեռվից փայլեցին Միլդենդոյի աշտարակները, չլսեց, թե ինչպես աղմկում էին քաղաքից իր գեմը վազող լիլիպուտները:

Գուլիվերին բերին յերկրի ամենամեծ տունը:

Այդ տունը յերկու անկյունների աշտարակներ ունեցող մի ամրոց էր:

Ամրոցը գտնվում էր քաղաքի մոտ, մի կանաչ մարգագետնի վրա:

Ամբողջի դռներն այնքան բարձր էին, վոր Գուլիվերը կարող եր կուզեկուզ ներս մտնել: Իսկ հանգիսի դահլիճում նա կարող եր մինչև անգամ ամբողջ հասակով պառկել:

Գուլիվերի վոտին մի ինչ-վոր բան կպավ ու ցավեց՝ նա զարթնեց:

Նրա վոտքերի մոտ վխտում էին թևերը քշտած, սև գոգնոցներ կապած լիլիպուտներ:

Նրանցից յուրաքանչյուրի ձեռքին փայլում եր մի պստիկ մուրճ:

Սրանք պալատական դարբիններն էին. Գուլիվերին շղթայակապ էին անում:

Աշտարակի լուսամուտի ճաղերից մինչև նրա վոտները ձգված էին իննսուն մեկ շղթա:

Շղթաների վրա յերեսուն վեց կողպեք կար:

Շղթաներն այնքան յերկար էին, վոր Գուլիվերն ազատ կարող եր մարգագետնում ման գալ և իր տունը մտնել:



Դարբիններն իրենց գործը վերջացրին ու յետ քաշվեցին:

Պահակները պարանների կապերը կտրտեցին, և Գուլիվերը վոտի կանգնեց:

«Ա—ա՛խ», — անցավ լիլիպուտների միջով:

«Կուլինբուս Ֆլեստրին, Կուլինբուս Ֆլեստրին»:
Լիլիպուտներն այս նշանակում ե Լեռ-Մարդ:
Չորս կողմից վազում էին հետաքրքրվողները:
Նրանք շրջապատեցին Գուլիվերին, իրար հրում էին, կռվում:

Գուլիվերը վախենում եր շարժվել. կարող եր նրանցից մեկն ու մեկին տրորել:

Իսկ լիլիպուտները վխտում էին նրա վոտների շուրջը, ձեռնահարում կոշիկները: Նրան տեսնելու համար այնքան էին բարձրանում, վոր գլխարկներն ընկնում եր:

Յերեսաները վիճում էին, թե կարելի՞ յե արդյոք մինչև Գուլիվերի քիթը քար գցել:

Յերկու սպիտակ միրուքավոր իմաստուն մարդ ել խոսում էին, թե վնասեցից ե յեկել Լեռ-Մարդը:

— Մեր հին գրքերում գրված ե, վոր հազար տարին մի անգամ ծովը մի սարսափելի հսկա յե ափ դուրս գցում:
Յեա կարծում եմ, վոր Լեռ-Մարդը ծովի հատակից ե դուրս յեկել, — ասաց կանաչ գլխարկով իմաստունը:

— Վո՛չ, — ասաց կարմիր գլխարկով իմաստունը, — ծովային հսկաները պոչավոր են լինում: Լեռ-Մարդը լուսնից ե ցամաք ընկել:

Լիլիպուտիայում չգիտեին, թե ուրիշ յերկիրներ ել կան: Նրանք կարծում էին, թե աշխարհում միայն լիլիպուտներ են ապրում:

Իմաստունները վիճեցին, վիճեցին, բայց չկարողացան վորոշել, թե Լեռ-Մարդը վնասեցից ե յեկել:

«ԹԱԳԱՎՈՐԻՆ ՃԱՆԱՊԱՐԶ ՏՎԵՔ»



և ձի նստած, աղեղները ձեռքներին՝ ձիավորները ցրում էին ամբոխը:

Ձիերը նոր ծնված փիսիկների չափ էին:

«Ճանապա՛րհ, ճանապա՛րհ տվեք թագավորին», — գոչում էին ձիավորները:

Գուլիվերը տեսավ անիվների վրա դրված մի վոսկե տուփ, վորին յերեք գույգ սպիտակ ձի յեր լծված:

Չորս մարդ գետնին մի կտոր թավիչ փռեցին և կառ-
քի զոնները բաց արին:

Թագավորը հպարտ-հպարտ ցած իջավ և զնաց զեպի
Գուլիվերը:

Նորին մեծությանը լավ տեսնելու համար, Գուլիվերը
զետնի վրա պառկեց:



Նորին մեծությունը հասակով մի մատիտի չափ էր,
ձեռքի թուրը՝ լուցկուց մի քիչ յերկար: Նրա շորերի
վրա փոսկիներ ու թանգագին քարեր էյին փայլում:

Թագավորը Գուլիվերի չորս կողմը պտտեց, մի յեր-
կար, անհասկանալի ճառ ծվծվաց և մինիստրների հետ իր
պալատը վերադարձավ:

Պալատում նրանք սկսեցին մտածել, թե Գուլիվերի
հետ ինչպես վարվեն:

Թագավորը և մինիստրներն ուզում էյին սպանել
նրանք Կուինբուս Ֆլեստրինից վախենում էյին:

Գուլիվերը մեղավոր չէր, վոր հասակով մեծ է և վոչ
թե լիլիպուտ, բայց թագավորական պալատներում խիղճ
չկա:

Միայն թագավորի քարտուղար Ռեզերեսսելը պաշտ-
պանեց Գուլիվերին:

— Լեո-Մարդուն չսպանենք, զինվորական ծառայու-
թյան վերջնենք: Վոչ մի յերկիր այնպիսի պաշտպան չի
ունենա, ինչպիսին մեր յերկիրը:

— Դատարկ բան է, — գոչեց Սկայրեշ Բուլգոլամը:

Սկայրեշ Բուլգոլամը վողջ Լիլիպուտիայի նավատորմի-
դի հրամանատարն էր և շատ հայտնի մարդ: Վախենում
էր՝ չլինի թե Լեո-Մարդն իր հոչակը նսեմացնի:

— Գանձարանում այնքան փող չի լինի, վոր այդ հրե-
շին կերակրենք, — ասաց աչքածակ գանձապահ Ֆլիմսպը, —
ուտելու բան չտաք, թող մեռնի:

— Լավ, — ասաց թագավորը, — ո՛ւր է իմ մեծ կնիքը:

Այդ ժամանակ մարգագետնում հետաքրքիր ամբոխը
կրկին շրջապատել էր Գուլիվերին:

Հեծյալ պահակները պաշտպանում էյին նրան, բայց
այնուամենայնիվ հինգ թափառաշրջիկներ մոտեցան Լեո-
Մարդուն և նրա վրա նետեր արձակեցին:

Նետերից մեկը քիչ մնաց Գուլիվերի աչքին դիպչի:
Պահակապետը շատ վախեցավ, կապկպեց չարաճճինե-
րին և Գուլիվերի վոտքերի տակ պառկեցրեց:

Գուլիվերը նրանցից մեկին վերցրեց, մոտեցրեց բեր-
նին և սկսեց ատամները չխշխկացնել, իբրև թե ու-
ղում է վողջ-վողջ ուտել: Լիլիպուտը բարձր ծվծվաց:
Գուլիվերն իր դանակը հանեց: Լիլիպուտն ափելի բարձր
ծվծվաց:

Գուլիվերն զգուշությամբ դանակով պարանները
կտրտեց, փոքրիկ մարդուն դրեց գետնի վրա և թույլ
ույեց, վոր իր ընկերների հետ գնա:

— Ուռն, ուռն, — բացազանչեցին լիլիպուտները և
գլխարկները զեպի վեր նետեցին:

Պահակապետն իսկույն սլացավ զեպի պալատը:
Գուլիվերի մահվան դատավճիռն արդեն ստորագրված
էր, մնում էր, վոր թագավորը կնքի:

Հենց վոր թագավորը ձեռքը տարավ զեպի կնիքը,
դուռը բացվեց, և պահակապետը ներս մտավ:

Նա չոքեց թագավորի առաջ և պատմեց թե ինչ է
պատահել հրապարակում:

— Տեսնում եք, ձերդ մեծություն, — ասաց քարտու-
ղար Ռեզերեսսելը, — յեպ շասացի՞, վոր Կուինբուս Ֆլեստ-
րինը փտանգավոր չէ: Յես կրկնում եմ, վոր նա մեր լավ
պաշտպանը կլինի:

Գուլիվերին ներեցին:




ԽՈՒՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ

ազավորը յերկու աստիճանավոր ու-
ղարկեց Գուլիվերին խուզարկելու:

Գուլիվերը համաձայնեց և մինչև
անգամ ոգնեց նրանց: Նա զգուշու-
թյամբ աստիճանավորներին վերցրեց
և դրեց իր գրպանի մեջ:

Ամբողջ յերեք ժամ աստիճանա-

Վորները խուզարկում եյին Գուլիվերի գրպանները: Վերջապես նրանք խնդրեցին, վոր Գուլիվերը գրպանից հանի իրենց:



Նրանք Գուլիվերին գլուխ տվին և տարան ու թագավորին հանձնեցին իրենց կազմած տրձանագրությունը Լեո-Մարգու իրերի մասին:

Ահա թե ինչ եյին գրել.

«Մենք, նորին մեծության Լիլիպուտիայի թագավորի աստիճանավորներս, խուզարկեցինք Լեո-Մարգուն և շատ իրեր գտանք.

Բաճկոնի աջ գրպանում գտանք մի մեծ կտոր կոշտ քաթան: Այդ քաթանի կտորը թագավորի պալատում յեղած ամենամեծ գորգից մեծ ե:

Ձախ գրպանում գտանք մի արծաթե սնդուկ՝ իր խուփով: Այդ սնդուկի մեջ գեղին փոշի կա, վորն անդուրեկան հոտ ունի: Հոտից մենք մի ամբողջ ժամ փռչտում եյինք:

Ժիլետի աջ գրպանում մի բան կա, վոր նման ե թագավորական այգու ցանկապատին: Դա մի յերկար տախտակ ե, վորին քսան փայտ ե ամրացված: Կարծում ենք, վոր Լեո-Մարգն այդ գործիքով սանրում ե իր մագերը:

Ժիլետի ձախ գրպանից շղթայով կախված ե մի մեծ, կլոր արկղ, վորի մի կողմն արծաթից ե, մյուսը՝ ապակուց: Ապակու միջից տարորինակ նշաններ են յերևում: Արկղի մեջ մի ինչ վոր գազան ե նստած, վորը շարունակ ասում ե. «տիկ-տակ, տիկ-տակ, տիկ-տակ»:

Շարվարի գրպանում կա յերկաթից ու փայտից պատրաստված մի սարսափելի մեքենա:

Գոտուց կախված ե մի այնպիսի մեծ դանակ, վորն ամենամեծ լիլիպուտից հինգ անգամ յերկար ե:


Խուզարկության ժամանակ Լեո-Մարգը քաղաքավարի յեր ու համեստ:

Վավերացնում ենք մեր ստորագրությամբ ու կնիքով: Թագավորական աստիճանավորներ՝

Կլեֆրին Ֆրելոկ
Մարսի Ֆրելոկ

Մյուս ուրը Գուլիվերի տան առաջ շարվեցին զորքերը: Հավաքվեցին պալատականները, յեկավ ինքը՝ թագավորը մինիստրների հետ և պահանջեց, վոր Գուլիվերն իրերը հանձնի:

Աստիճանավորները ցուցակը՝ կարգացին, իսկ Գուլիվերը մեկ-մեկ հանում եր:




Նա հանձնեց իր թաշկինակը, ծխախոտի տուփը, տանը, ժամացույցը, ստորճանակը և դաշույնը:

Ատրճանակը լցված եր: Գուլիվերը բարձրացրեց ու կրակեց:


Լիլիպուտիայում մի չտեսնված դղրոյուն լսվեց:
Յերեք հազար զինվոր ուշաթափվեց, քիչ մնաց, վոր
մինիստրներից յերկուսը վախից մեռնեյին: Թագավորը
գունատվեց, ձեռքերով յերեսը ծածկեց և յերկար ժամա-
նակ աչքերը չեր կարողանում բաց անել:

Յերբ ծուխը ցրվեց և ամեն ինչ հանդարտվեց, թա-
գավորը հրամայեց, վոր ատրճանակն ու դաշույնը զինա-
նոցը տանեն:



Մնացած իրերը վերադարձրին Գուլիվերին:

ԳՈՒԼԻՎԵՐԻ ՅԵՐԴՈՒՄԸ



Ի ամբողջ ամիս Գուլիվերը
գերության մեջ եր:

Լիլիպուտիայի վեց ամե-
նախմաստուն գիտնականներն
ամեն ոք գալիս եյին նրա
մոտ և սովորեցնում լիլի-
պուտների լեզուն:

Ամսվա վերջին Գուլիվերն
արդեն կարողանում եր լիլի-
պուտների հետ խոսել:

Նա այնքան սիրալիր եր,
վոր լիլիպուտներն այլևս նրանից չեյին վախենում,

Յերեսխաները նրա մագերի մեջ պահատոցիկ եյին
խաղում, իսկ մեծերը նրա ձեռքերի վրա պար եյին գալիս:

Անվանի մարդիկ գալիս եյին նրա հետ զրույց անե-
լու, իսկ թագավորն այցելում եր Գուլիվերին տոն ուրե-
րին:

Սակայն պահակները հետևում եյին նրա յուրաքան-
չյուր շարժումին, և շղթաները յերեքից ավելի քայլ անե-
լու հնարավորություն չեյին տալիս:

Գուլիվերը շատ տխուր եր:

Շատ անգամ եր նա խնդրել
թագավորին, վոր իրեն ազատի:
Թագավորը խոստացել եր, բայց
իր խոստումը չեր կատարում:

Այդպես ել կմեռներ նա գերու-
թյան մեջ, յեթե հետախույզները
չգեկուցեյին թագավորին, թե Լիլիպուտիայի թշնամիները
պատերազմի յեն պատրաստվում:

Ինչորը շատ վախեցան:

Թագավորը հիշեց Գուլիվերին:

«Պետք ե նրան ազատել և հետը լավ վարվել, — վճոց
նա, — այն ժամանակ Լեո-Մարդը մեզ կպաշտպանի»:

Նա ուղարկեց Գուլիվերի մոտ իր քարտուղար Ռեյդ-
րեսսելին, յերեք մինիստր, հինգ գեներալ և կնիք պա-
հողին:

«Թագավորը ձեզ ազատություն ե տալիս, — ասաց
քարտուղարը, — յեթե յերգվեք, վոր կպաշտպանեք Լիլի-
պուտիան թշնամիներից»:

Գուլիվերը չոքեց, ձախ ձեռքով բռնեց աջ կոշիկի
ծայրը, իսկ աջ ձեռքի բութ մատը դրեց ձախ ականջի
վրա:

Լիլիպուտիայում այդպես են հավատարմության յեր-
դում տալիս:


«Յես, Կունիբուս Ֆլեստրին, Լեո-Մարդս, արտասա-
նեց Գուլիվերը, — յերգվում եմ, վոր կպաշտպանեմ մինչև
իմ արյան վերջին կաթիլը նորին բարձրության Գոյբաս-
տո Մոարին եվլեմ Հերդայտո Շեֆին՝ Մուլի Ուլի Հոյին
Լիլիպուտիայի հզոր թագավորին և նրա յերկիրը»:

Դարբերները Գուլիվերի շղթաներն արձակեցին:

Նա ազատ եր:

Մինիստրները շնորհավորեցին Գուլիվերին և խնդրե-
ցին քաղաքում զգուշ ման գա, վոր ժողովրդին կոխ
չտա:





ենց նույն ուր Գուլիվերը
գնաց մայրաքաղաքը դիտե-
լու:


Քաղաք դուրս գալուց յեր-
կու ժամ առաջ, տասներկու
մունետիկ վողջ քաղաքը շըր-
ջեցին:

Դրանցից վեցը փող եր
փչում, իսկ վեցն աղաղակում
եր:

«Միլլենդոյի բնակիչներ,
թագնվեցեք տներում: Կու-
նքուս ֆլեստրինը, Լեռ-

Մարդը, գալիս ե քաղաք»:

Փողոցները դատարկվեցին, և Գուլիվերը քաղաք մտավ:
Նա բաձկոնը հանեց, վոր փեշերը շրտաւ խողովակ-
ներին ու պատշգամբներին չկպչեն:



Չգուշ անցնում եր Գուլիվերը փողոցներով և դիտում
քաղաքի այգիները, աշտարակներն ու տները:
Այգիներն ասեղնագործ բարձերի եյին նմանում,

աշտարակները հասնում եյին մինչև նրա գոտին, իսկ
տները շան բնից ել փոքր եյին:

Յերբեմն Գուլիվերը գլխով բարևում եր և պատու-
հաններից ներս նայում:

Մի տան մեջ նա տեսավ սպիտակ թասակով մի խո-
հարար: Խոհարարը հնդուհավ եր փետրում, վորը մեր մա-
յիսյան բզեզի չափ եր:

Մի ուրիշ տան մեջ դերձակը կար եր անում: Գուլի-
վերը գլխի ընկավ, վոր նա ասեղը թելում ե: Բայց ասեղն
ու թելն այնքան փոքր ու բարակ եյին, վոր Գուլիվերը
չնկատեց:

Դպրոցում աշակերտները նստարանների վրա նստած
գրում եյին:

Նրանք մեզ պես ձախից աջ չեյին գրում:

Inimitabilem, Incomparabilem

Վոչ ել արաբերենի պես աջից ձախ՝

لَوْ يَعْلَمُ الَّذِينَ كَفَرُوا حِينَ لَا يَكْفُونُ عَنْ وَجْهِهِ النَّارَ وَلَا عَنْ
ظُهُورِهِمْ وَلَا هُمْ يَنْصُرُونَ

Վոչ ել ինչպես չինացիք - վերևից ներքև՝

西
域
同
文
志
頭
內
屬
史
嗣

այլ մի անկյունից դեպի մյուս անկյունը:
Վերջապես Գուլիվերը հասավ թագավորի պալատը:
Պալատում տոնակատարություն կար:

Թագավորը հրավիրեց Գուլիվերին, փոր պատուհանից նայի:


Դահլիճում կապված եյին մեր կոճի թելից փոշ հաստ պարաններ:

Պալատականները հերթով պարում եյին և պարանների վրայից թռչում: Ով փոր բարձր եր թռչում, մինիստրի պաշտոն կամ շքանշան եր ստանում:

Այդպես եր ընտրում թագավորն իր մինիստրներին, և Լիլիպուտիայի բնակիչներն ստիպված եյին հնազանդել պարանի վրայից թռչողներին:

Գուլիվերին այս բոլորը ծիծաղելի թվաց: Նա բարձր ծիծաղեց և տուն վերադարձավ:

Թագավորը վերափորվեց, բայց չուղեց Գուլիվերի հետ վեճի բռնվել:



ՀԱՂԹՈՒԹՅՈՒՆ

Երեք որից հետո թագավորական զեսպանը, բրտինքի մեջ կորած իր ձին նստած, ներկայացավ Գուլիվերին:

— Լիլիպուտիայի զեղեցիկ թագավորությանը պատերազմ ե հայտարարված: Թշնամիներն իրենց նավերը պատրաստել են և

հաջող քամու յեն սպասում, փոր մեզ շրջապատեն: Թագավորը խնդրում ե, փոր մեզ ոգնեք, — ասաց զեսպանը:

— Յես խոստացել եմ պաշտպանել Լիլիպուտիան, — պատասխանեց Գուլիվերը, — և խոստումս կկատարեմ: Բայց ինչից սկսվեց պատերազմը, և յես ում հետ պետք ե կընվեմ:

— Մեր թշնամին Բլեֆուսկուի թագավորությունն ե, — պատասխանեց զեսպանը: — Վատ յերկիր ե այդ Բլեֆուսկուն: Արդեն հարյուր տարի յե, ինչ մենք պատերազմում ենք նրանց հետ: Կարող եք յերևակայել, նրանք ձուն կոտրում են բութ ծայրից:

— Միթե դա վատ ե, — հարցրեց Գուլիվերը:

— Իհարկե, — բացազանչեց զեսպանը: — Հարյուր տարի առաջ մեր թագավորի պապը նախաճաշի ժամանակ ձու յեր ուտում: Նա ձուն կոտրեց բութ ծայրից և մատը կտրեց: Այդ

որվանից թագավորը մահապատժի յերկյուղով հրամայեց, փոր ձուն սուր ծայրից կոտրեն: Շատ Լիլիպուտներ չուղեցին հնազանդել թագավորին և փախան Բլեֆուսկու: Այդ յերկրի թագավորը սիրալիր ընդունեց հանցավորներին և նրանց ծառայության ընդունեց: Յերկու թագավորը վեճի բռնվեցին և այդ որվանից շարունակ պատերազմում են իրար հետ:

Գուլիվերին ծիծաղելի թվաց ձվի պատճառով կռիվ անելը, բայց խոստումը պիտի կատարեր:

Նա հագնվեց ու գնաց ծովափ, թշնամու նավատորմի դիրքը:

Բլեֆուսկուցիներն ապրում եյին կղզու վրա: Նրանք ել Լիլիպուտների պես փոքրիկ եյին:

Գուլիվերը թագնվեց բլրի յետևը և սկսեց դիտել, թե ինչ ե կատարվում Բլեֆուսկույում:

Նավահանգստում 50 նավ կար:

Գուլիվերը յոթ տարեկան հասակում հենց այդ մեծության նավեր ունեց:

Ծովափին խոնվել եյին զինվորներն ու նավաստիները:

Գուլիվերը Միլդենդո վերադարձավ:

Փողոցներում մարդ չկար. բնակիչները թագնվել եյին աներում — թշնամուց վախենում եյին:

Գուլիվերը գնաց պալատ և խնդրեց թագավորին, փոր իրեն տանամենաամուր պարաններ և ամենահաստ յերկաթե ցցեր:

Նա ամբողջ գիշերը պարաններից ճոպան եր հյուսում և յերկաթե ձողերից կեռեր պատրաստում:

Առավոտյան զեմ ամեն ինչ պատրաստ եր:

Թագավորը, մինիստրները, զորքը և Լիլիպուտիայի հազարավոր բնակիչներ հավաքվել եյին ծովափ և նայում եյին թե ինչպես ե Գուլիվերը շորերն ու կոշիկները հանում:

Ահա նա ուսը գցեց ճոպաններն ու կեռերը, ջուրը մտավ և լողաց:

Շուտով նա ծովային մշուշում կորավ:

Իսկ Բլեֆուսկույում նավերը պատրաստ եյին ճանապարհ ընկնելու:

Նավաստիները կանգնած եյին իրենց տեղերում, առաջաստները բաց եյին թողնված: Ափից յերաժիշտները

փող եյին փչում, իսկ ճանապարհ դնողները թաշկինակները թափահարում եյին:

Հանկարծ առաջին նավից տագնապի ազդանշաններ լսվեցին:

Մի ահագին սև բան եր մոտենում Բլեֆուսկուն:

«Լողացող կղզի՛, լողացող կղզի՛» — աղաղակեցին Բլեֆուսկուցիները:



Բայց դա կղզի չեր — Գուլիվերն եր:

Նա լողալով մոտեցավ նավերին, կեռերը ցցեց նրանց մեջ, ճոպաններն ամրացրեց կեռերին, հետո դանակը հա-



նեց և խարխիսների ճոպանները կտրտեց:

Նավաստիները գորտերի պես շուրը թռան:

Ափին կանգնած մարդիկ սարսափից քարացան: Նրանք վախենում եյին, վոր սարսափելի հսկան իրենց նշանավոր նավատորմիդը ջարդ ու փշուր կանի:

Բայց վոչ:

Հանկարծ յերեսը դարձրեց դեպի Լիլիպուտիայի ափերը, և վողջ նավատորմիդը կանոնավոր կերպով, ինչպես թռիկից կապած շնիկ, շարժվում եր նրա յետևից:

Բլեֆուսկուցիներն իրար անցան, աղմուկ բարձրացրին և նետեր արձակեցին:

Նետերը վժվժում եյին Գուլիվերի ականջի մոտ, ծակծրկում նրան, ցցվում մաշկի մեջ, բայց նա դեպի առաջ եր լողում, և նրա հետ միասին՝ բլեֆուսկուցիների նավերն ու փառքը:



«ԿԵՑՑԵ՛ ԼԻԼԻՊՈՒՏԻԱՅԻ ՓՐԿԵԶԸ»

ի ամբողջ շաբաթ լիլիպուտները տոնում եյին իրենց հաղթանակը:

«Կեցցե Կունիբուս Ֆլեստրինը, Լիլիպուտիայի փրկիչը» — գոչում եր ժողովուրդը, իսկ թագավորը պարգևատրեց նրան պետության մեջ գլխավորուն ունեցող բոլոր շքանշաններով:

Յերբ տոնակատարությունը վերջացավ, թագավորը Գուլիվերին իր մոտ կանչեց:

Նա հրամայեց կրկին Բլեֆուսկու գնալ — կործանել ամրոցները, խլել ժողովրդի հացն ու հոտերը և ստիպել նրանց, վոր ընդմիջտ յենթարկվեն Լիլիպուտիայի թագավորին:

Լիլիպուտիայի թագավորը, ինչպես և բոլոր թագավորները, ուզում եր վողջ աշխարհը տիրել:

Քիչ առաջ նա ուրախացավ, վոր Լիլիպուտիան ազատվեց, իսկ այժմ ուզում եր Բլեֆուսկուն տիրել:

— Չերբ բարձրություն, — պատասխանեց Գուլիվերը, — յես խոստացել եմ պաշտպանել Լիլիպուտիան, բայց յերբեք չեմ համաձայնի խաղաղ մարդկանց վոչնչացնել:

Թագավորը վոչինչ չասաց, բայց ինքն իրեն յերգվեց, վոր իր խոսքը չլսելու համար Գուլիվերից վրեժ առնի:

Շուտով Բլեֆուսկուից ղեսպաններ յեկան հաշտություն խնդրելու:

Նրանք թագավորի համար բերել էին տասը տոպրակ վոսկի և խոստանում էին ալևա Լիլիպուտիայի վրա չհարձակվել:



Հետո իմացան, թե ինչ եր հրամայել թագավորը Գուլիվերին և թե ինչպես վերջինս հրաժարվել եր նրա հրամանը կատարելուց:

Դեսպանները գնացին Գուլիվերի մոտ, շնորհակալություն հայտնեցին և իրենց յերկիրը հրավիրեցին:

Գուլիվերի հին թշնամին, ծովակալ Սկայրեշ Բուլգոլամը տեսավ, թե ինչպես ղեսպանները գնացին Գուլիվերի մոտ և նրա հետ խոսակցություն ունեցան:

Սկայրեշ Բուլգոլամը Գուլիվերին շատ եր նախանձում: Կուլինբուս Ֆլեստրինը քսանհինգ շքանշան ուներ, իսկ ինքը՝ միայն տասներկու:

Ծովակալը վազեց թագավորի մոտ և ասաց, թե Գուլիվերը դավաճան է. նա խոսք է տվել ղեսպաններին, վոր գնա Բլեֆուսկուի թագավորի մոտ ծառայելու:

Թագավորն ուշադրությամբ լսեց ծովակալին և ասաց. — Ժամանակ է հանդուգն Կուլինբուս Ֆլեստրինին պատժելու:

Նա հրավիրեց մինիստրներին վորոշելու, թե ինչպես պատժեն Գուլիվերին:

— Գլուխը կտրենք, քնած ժամանակ խեղդենք, թունավորենք այդ դավաճանին, — աղաղակում եր Սկայրեշ Բուլգոլամը: Բայց նախ և առաջ վերցնենք նրա բոլոր շքանշանները և տանք թագավորի հավատարիմ ծառաներից մեկին:

«Շքանշաններն ինձ կտան», — մտածում եր նա:

Մինիստրները վիճեցին:

Վոմանք առաջարկում էին խեղդել, վոմանք՝ թունավորել:



Ռեյդրեսսելը դարձյալ Լեո-Մարգու կողմը պահեց. — Կուլինբուս Ֆլեստրինը փրկեց Լիլիպուտիան և բերեց Բլեֆուսկուի նավատորմիդը, — ասաց նա:

— Լսեցեք ինձ, — ասաց աչքածակ գանձապահ Ֆլիմնապը, — յես առաջարկում եմ Լեո-Մարգու աչքերը հանել: Այն ժամանակ նա չի կարող փախչել և մենք կստիպենք նրան ջրանցքներ փորել, բարեր տեղափոխել, ջուր կրել: Դրանով նրան լավ պատիժ տված կլինենք, իսկ մեզ՝ մեծ ոգուտ:

Ֆլիմնապի խորհուրդը թագավորին դուր յեկավ և նա հրամայեց Գուլիվերի աչքերը հանել:

Ուշ գիշեր եր:

Մի մարդ Գուլիվերի տան դուռը թխթխկացրեց:

Գուլիվերը դուռը բաց արավ:

Դռնից մկան պես ներս պրծավ մի սևազգեստ մարդ:

Դա քարտուղար Ռեյդրեսսելն եր:

— Յես ձեզ մոտ շատ կարևոր գործով եմ յեկել, ասաց նա: Գուլիվերը նրան վերցրեց, դրեց ձեռքի վրա և մոտեցրեց ախանջին:

Քարտուղարը ցածր ձայնով պատմեց թագավորի և մինիստրների վորոշման մասին:

— Վաղը ձեր աչքերը հանելու յեն: Փախեք այստեղից, — ասաց նա:



Գուլիվերը շնորհակալութիւն հայտնեց քարտուղարին և, վորպես հիշատակ, ընծայեց նրան իր մատանին։
Ռեդրեսսելը մատանին վորպես գոտի իր մեջքին անցկացրեց, և նրանք ընդմիշտ բաժանվեցին։



ՎԵՐԱԴԱՐՁ

ուլիվերը շատ վերաժողովեց։
«Յերախտամոռ լիկպուտներ,
—մտածեց նա,— իմ ցույց տված
ոգնութիւն փոխարեն ուզում եք
կուրացնել ինձ... Յես վրեժ կհա-
նեմ ձեզանից»։

Նա բռունցքները բարձրաց-
րած վագեց Միլդենդո, վոր աշտարակներն ու աները
կործանի։



Գուլիվերն ուզում էր քաղաքի պատերից անցնի, բայց
հանկարծ փոքրիկ մարդկանց խղճաց։

«Նրանք մեղավոր չեն,—մտածեց Գուլիվերը,— թա-
գավորն ու միսիստրներն են մեղավոր»։

Նա շուռ յեկավ ու գեպի ծովը գնաց։

Հիշեց, վոր Բլեֆուսկոսիներն իրեն հրավիրել են և
վճուեց գնալ նրանց մոտ։

Մութն էր։ Բոլորը քնած էին։

Վոչ վոք չտեսավ, թե ինչպես Գուլիվերը ջուրը մտավ,
վոչ վոք չլսեց, թե ինչպես ջուրը ճղվաց, յերբ նա լողալ
սկսեց։

Բլեֆուսկոսի թագավորն ու րախութիւնը գիմավորեց
նրան։

Նա առաջարկեց Գուլիվերին իր մոտ ծառայութեան
մտնել, բայց Գուլիվերն այլևս թագավորին չեր հավա-
րում։

Տխուր-տրտում ման էր գալիս Գուլիվերը ծովի ափին։
Կարոտել էր իր հայրենիքին. մտածում էր, թե ինչպես
վերադառնա խոշոր մարդկանց մոտ։



Բայց ովկիանոսը բոլոր կողմերից շրջապատված էր
կղզիներով, և հորիզոնում վոչ մի առաքաստ չեր յերևում։

Գուլիվերը փորձեց նավակ պատրաստել, բայց այդ
յերկրի անտառների ամենահաստ ծառերն անգամ մակույ-
կի համար անպետք էյին։

Նա հայրենիք տեսնելու հույսը կտրեց։

Մի անգամ, ուժեղ փոթորկից հետո, Գուլիվերն, ինչ-
պես միշտ, առավոտյան զբոսանքի դուրս յեկավ։

Հեռվից նրան թվաց, թե ծովափնյա քարերի մոտ մի
մեծ ծովային կենդանի յե քնած։

Նա արագ մոտեցավ։

Տեսածը կենդանի չէր, այլ շուռ յեկած նավակ։

Գուլիվերն աչքերին չեր հավատում։

Նավակն ամուր էր, պակասում էին միայն թիակ-
ները։

Գուլիվերն ամենաբարձր ծառերից յերկուսը կտրեց և
մի գիշերվա մեջ թիակներ պատրաստեց։

Հետո իր գլխարկը հաց ու միս լցրեց, վերցրեց նաև
վեց կենդանի վոչխար և յերկու կով։

Նա ուզում էր կովերն ու վոչխարներն իր ազգական-
ներին ցույց տալ։

Յերկար ժամանակ Գուլիվերը լողում էր ամայի ծո-
վում։


Վերջապես նա՛վի առաջատ նկատեց:
 Գուլիվերի սիրտն ուրախությունից թրվուաց:
 Հենց հիմա, հենց հիմա խոշոր մարդիկ կտեսնի:
 «Միայն թե նկատեն, միայն թե վերցնեն ինձ», —
 մտածում էր նա:



— Ազատեցեք: Մոտեցե՛ք ինձ: Ոգնեցե՛ք, — գոչում էր
 Գուլիվերը:

Մի ժամից հետո նավապետի սենյակում նստած, նա
 պատմում էր իր արկածները:

Նավապետը չէր ուզում հավատալ, կարծում էր, թե
 Գուլիվերը խենթ է:




Բայց Գուլիվերը գրպանից հանեց կովերն ու վոչխար-
 ները և գրեց սեղանի վրա: Նրանք սկսեցին սեղանի վրա
 վազվզել, ինչպես մարգագետնում:

— Դա աշխարհիս ամենագարմանալի պատմությունն
 է, — ասաց նավապետը:
 Նա՛մն առաջատները պարզած առաջ էր սլանում:
 Մի ամսից հետո Գուլիվերը նա՛վի տատանվող տախ-
 տակամածից իր հայրենիքի ափն իջավ և գրկեց մորը,
 հորը և բարեկամներին:




Այսպես հաջող վերջացան Գուլիվերի արկածները Լի-
 վիպուտների յերկրում:




ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Բժիշկ Գուլիվերը	7
2. Նավի խորտակումը	8
3. Լիլիպուտների յերկրում	9
4. Գուլիվերի ճաշը	12
5. Գուլիվերը լիլիպուտների մայրաքաղաքում	13
6. «Թագավորին ճանապարհ տվեք»	15
7. Խուզարկություն	17
8. Գուլիվերի յերդումը	20
9. Զբոսանք մայրաքաղաքում	22
10. Հաղթություն	24
11. «Կեցցե՛ք Լիլիպուտիայի փրկիչը»	27
12. Վերադարձ	30

Гереверент 1948



Գրքի 1 Դ 50 Կ.



Джоннatan Свифт
Гулливер у Лилипутов
Гиз. С.С.Р. Армении

1031